ՄԱԿ-Ի ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Այս տարվա օգոստոսի 7-ից մինչև սեպտեմբերի 1-ը Ժնևում աշխատում էր ՄԱԿ-ի մարդու իրավունքների ենթահանձնաժողովը: Քննարկվում էին այնպիսի թեմատիկ հարցեր, ինչպիսիք էին ազգային փոքրամասնությունների իրավունքները, կրոնական երկպառակությունը, ինքնորոշումը, բռնությունը, մարդու իրավունքների և հիմնական ազատությունների խախտումը: Շոշափվեց նաև Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջն ստեղծված իրավիճակը: Նշվեց, որ հայերի պահանջները, նրանց խաղաղ ցույցերն ու գործադուլները կատաղի հակազդեցություն գտան ադրբեջանցիների կողմից, որոնք 1988 թվականի փետրվարին ու նոյեմբերին հայկական ջարդեր կազմակերպեցին: Այնուհետև դա հանգեցրեց հայերի և ադրբեջանցիների զանգվածային գաղթի և ծնեց գաղթականների պրոբլեմը: Ռեգիոնի սահմանադրական կարգավիճակը մինչև հիմա չի որոշված, ինչը Ադրբեջանի իշխանություններին թույլ է տալիս վարել նախկին խըտրական քաղաքականությունը, իսկ դա, վերջին հաշվով, շարունակում է սբեյ. լարված իրադրությունը: ՄԱԿ-ի ենթահանձնաժողովին առաջարկվեց դիմել ԽՍՀՄ-ի կառավարությանը և նրան առաջարկել մասնավորապես հետևյալը. Լեռնային Ղարաբաղում անցկացնել հանրաքվե ռեգիոնի բնակչության մեծ մասի կամքը պարզելու նպատակով, բացահայտել ու լրիվ հրապարակել 1988 թվականի փետրվարին ու նոյեմբերին Ադրբեջանում կազմակերպված հայերի ջարդերի ու կոտորածների դեպքերը:

(Արմենպրես)